ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ 02.03.2016թ. ԹԻՎ 155-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

29 հունիսի 2016թ,
ժամը 10:30

Մասնակցում էին՝

<u>Հանձնաժողովի նախագահ՝</u>
Յու.Իվանով — ԿԾ ՌԿԿ ղեկավար

<u>Հանձնաժողովի անդամներ՝</u>
Ա.Վարդանյան — ԿԾ ՎԿԿ առաջատար ինժեներ
Հ.Սարգսյան — ԿԾ ՎԿԿ ինժեներ

<u>Հանձնաժողովի քարտուղար՝</u>
Մ. Եսայան — Գնումների համակարգող

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկաների ընդհանուր գները ըստ չափաբաժինների՝ մեկ թվով արտահայտված:

Հրապարակվեցին «(1)ՀԱՆ-ՇՀԾՁԲ-15/25-16» ծածկագրով ընթացակարգի հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու հասցեները՝

«ՔՐՈՍՆԵԹ» ՍՊԸ, ք. Երևան, Նալբանդյան 28, cross@cross.am
«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ, ՀՀ, ք. Երևան, Ահարոնյան փ.2, corp_tender@beeline.am

ա) Վերոնշյալ կազմակերպությունների կողմից ներկայացված ծրարները համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:
Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

գ) Վերոհիշյալ կազմակերպությունների կողմից ներկայացված ծրարներում առկա էին հրավերով պահանջվող փաստաթղթերը:
Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Հայտարարվեցին մասնակիցների գնային առաջարկները՝
«ՔՐՈՍՆԵԹ» ՍՊԸ՝ 17 400 (տասնյոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:
«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ՝ 57 500 (հիսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:
Հաշվի առնելով նաև մասնակիցների կողմից տրամադրված միջազգային կապի սակագները՝

Հանձնաժողովը որոշեց՝

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՔՐՈՍՆԵԹ» ՍՊԸ:**
2. 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցել սույն արձանագրությունը ուղարկելու միջոցով՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին պետք է կցվի նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա

ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը:

Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

3. Հանձնարարարել գնման համակարգողին ներկայացնել հարցում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

4. Հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 12.07.2016թ. ժամը 10.30:

Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Յու.Իվանով		Հանձնաժողովի նախագահ
Ա.Վարդանյան		Հանձնաժողովի անդամ
Հ.Սարգսյան		Հանձնաժողովի անդամ
Մ. Եսայան		Հանձնաժողովի քարտուղար